Առանց խտրականության

«Covered California»-ն կատարում է համապատասխան դաշնային օրենքի պահանջները քաղաքացիական իրավունքների մասին և խտրականություն չի կիրառում՝ ելնելով ռասայից, մաշկի գույնից, ազգային պատկանելությունից, տարիքից, հաշմանդամությունից կամ սեռական պատկանելությունից: «Covered California»-ն մարդկանց չի բացառում կամ այլ կերպ վերաբերվում՝ նրանց ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ սեռական պատկանելության պատճառով:

«Covered California»-ն՝

- անվճար օժանդակ միջոցներ և ծառայություններ է տրամադրում հաշմանդամություն ունեցող անձանց, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ կերպով հաղորդակցվել մեզ հետ, օրինակ՝
    - նշանային լեզվի՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ,
    - գրավոր տեղեկություններ այլընտրանքային ձևաչափերով (խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված, հատուկ պահանջներ ունեցող անձանց համար մատչելի էլեկտրոնային և այլ ձևաչափերով).
- անվճար լեզվական ծառայություններ է տրամադրում այն անձանց, որոնց հիմնական լեզուն անգլերենը չէ, օրինակ՝
    - համապատասխան որակավորում ունեցող բանավոր թարգմանիչներ,
    - այլ լեզուներով գրված տեղեկություններ:

Եթե Ձեզ անհրաժեշտ են այդ ծառայությունները, դիմեք Randy Prudhel-ին՝ քաղաքացիական իրավունքների հարցերով համակարգիչ աշխատակցին՝ (916) 228-8613 հեռախոսահամարով, CivilRights@covered.ca.gov էլեկտրոնային փոստի հասցեով կամ (916) 779-1425 ֆաքսի համարով:

Ինչպես գանգատ ներկայացնել

Եթե կարծում եք, որ «Covered California»-ն հրաժարվել է տրամադրել այդ ծառայությունները կամ որևէ այլ կերպ խտրականություն է կիրառել՝ ելնելով ռասայից, մաշկի գույնից, ազգային պատկանելությունից, տարիքից, հաշմանդամությունից կամ սեռական պատկանելությունից, կարող եք գանգատ ներկայացնել Randy Prudhel-ին՝ քաղաքացիական իրավունքների հարցերով համակարգիչ աշխատակցին:

Գանգատը կարող եք ներկայացնել անձամբ նրան այցելելով, նամակով, էլեկտրոնային ուղերձով կամ ֆաքսով: Եթե Ձեզ օգնություն է հարկավոր գանգատ ներկայացնելու հարցում, Randy Prudhel-ը՝ քաղաքացիական իրավունքների հարցերով համակարգիչ աշխատակիցը, պատրաստ է օգնել Ձեզ:

Հասցե՝ Covered California, 1601 Exposition Blvd., Sacramento, CA 95815
Հեռախոս՝ (916) 228-8613
Էլ. փոստ՝ CivilRights@covered.ca.gov
ֆաքս՝ (916) 779-1425

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների հարցով բողոք ներկայացնել «U.S. Department of Health and Human Services»-ի «Office for Civil Rights»-ին:

Առցանց՝ Office for Civil Rights Complaint Portal
Փոստով՝ U.S. Department of Health and Human Services, 200 Independence Ave. SW, Room 509F, HHH Building, Washington, DC 20201

Բողոք ներկայացնելու ձևաթղթերը կարելի է գտնել «Office for Civil Rights»-ի կայքում:

Հեռախոս՝ (800) 868-1019
TTY՝ (800) 537-7697